# Հրահանգներ 2012թ. ուսումնական ծրագրի *համար*



## Բովանդակություն


2012թ. ընդհանուր կիրակնօրյա ուսումնական ծրագիր . . . 2

2012թ. հիմնական կիրակնօրյա ուսումնական ծրագիր . . . 4

Կիրակնօրյա քվորումներ և դասարաններ . . . 6

- Մելքիսեդեկյան Քահանայություն և Սփոփող Միություն . . . 6
- Ահարոնյան Քահանայություն և Երիտասարդ Կանայք . . . 6
- Երեխաների Խումբ . . . 7
- Կիրակնօրյա Դպրոց . . . 7
- Ըստ հայեցողության դասընթացներ . . . 7
- Հաշմանդամ անդամներ . . . 7
- Ուսումնասիրության և ուսուցանման բարելավում . . . 7

Նյութեր տան համար . . . 8


ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

## Եպիսկոպոսներին և ճյուղի Նախագահներին

*Խնդրում ենք ընթերցել այս հրահանգները և այնուհետև փոխանցել այս տպագրված օրինակը Կիրակնօրյա Դպրոցի նախագահին:*

## Կիրակնօրյա Դպրոցի Նախագահներին

- Այս ուղեցույցները նայելուց հետո ներկայացրեք դրանք ծխի կամ ճյուղի խորհրդի անդամներին հաջորդ խորհրդի ժողովի ժամանակ: Դուք կարող եք տեսնել ուղեցույցները կամ ներբեռնել լրացուցիչ օրինակներ lds.org/manuals կայքում:
- Խնդրեք խորհրդի անդամներին որոշել, թե ինչ նյութեր են անհրաժեշտ 2012թ. համար (նշեք, որ Եկեղեցու որոշ տարածքներում նյութերը ավտոմատ ուղարկվում են ծխերին և ճյուղերին):
- Խնդրեք խորհրդի անդամներին տեղեկացնել ուսուցիչներին, որ նյութերից շատերը կարելի է տեսնել և ներբեռնել lds.org/manuals կայքից:
- Եթե անհրաժեշտ են տպագրված նյութեր, դրանք կարող են պատվիրվել ձեր տարածքի բաշխման կենտրոնից կամ store.lds.org կայքից:

# 2012թ. ընդհանուր կիրակնօրյա ուսումնական ծրագիր

Օգտագործվում է այն տարածքներում, որտեղ Եկեղեցին լավ հաստատված է

*Այս նյութերից շատերը կարելի է տեսնել և ներբեռնել lds.org/manuals կայքից:*
*Եթե անհրաժեշտ են տպագրված նյութեր, դրանք կարող են պատվիրվել ձեր տարածքի բաշխման կենտրոնից կամ store.lds.org կայքից:*

| Կազմակերպու-թյուն | Դասագրքեր և նյութեր |
|---|---|
| **Մելքիսեդեկյան Քահանայություն և Սփոփող Միություն**<br> | 1-Ն ԿԻՐԱԿԻՆԵՐ<br>Սուրբ գրություններ. *Ձեռնարկ 2. Սպասավորել Եկեղեցում* (08702), եկեղեցու ամսագրեր, *Դուստրերն Իմ թագավորությունում. Սփոփող Միության պատմությունն ու աշխատանքը* (06500), *Քահանայության և Օժանդակ Կազմակերպությունների ղեկավարների ձեռնարկ* (31178), աշխարհով մեկ ղեկավարության ուսուցման նյութեր, *Ընտանեկան ձեռնարկ* (31180), և այլ Եկեղեցու կողմից հաստատված աղբյուրներ |
| | 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ԿԻՐԱԿԻՆԵՐ<br>*Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջորջ Ալբերտ Սմիթ* (36786) |
| | 4-ՐԴ ԿԻՐԱԿԻՆԵՐ<br>Մեր ժամանակի ուսմունքները. ելույթներ գերագույն համաժողովից. տես էջ 6 |
| | 5-ՐԴ ԿԻՐԱԿԻՆԵՐ<br>Թեմաները և Եկեղեցու հաստատված նյութերը որոշվում են եպիսկոպոսության կողմից |
| **Ահարոնյան Քահանայություն և Երիտասարդ Կանայք** | *Ահարոնյան Քահանայության Ձեռնարկ 1* (34820)<br>*Ահարոնյան Քահանայության նյութերի ուղեցույց 2012* (կարող եք գտնել միայն lds.org/manuals կայքում)<br>*Երիտասարդ Կանանց Ձեռնարկ 1* (34823)<br>*Երիտասարդ Կանանց նյութերի ուղեցույց 2012* (կարող եք գտնել միայն lds.org/manuals կայքում) |
| | Այլ նյութերը ներառում են՝ եկեղեցու ամսագրերը, *Կատարելով Աստծո առաջ իմ պարտականությունը. Ահարոնյան Քահանայություն կրողների համար* (06746), *Երիտասարդ Կանանց անձնական զարգացում* (36035), *Երիտասարդներին զորացնելու համար* (36550), *Հավատքին հավատարիմ* (36863), *Քարոզիր Իմ Ավետարանը* (36617), և *Երիտասարդների զորությունը, 2012թ. տեսասկավառակ:* |
| **Երեխաների Խումբ**<br> | 18 ԱՄՍԱԿԱՆ–2 ՏԱՐԵԿԱՆ (ՄԱՆԿԱՄՍՈՒՐԱՅԻՆ ԴԱՍԱՐԱՆ)<br>*Նայեք ձեր փոքրիկներին. մանկամսուրային դասագիրք* (37108) |
| | 3–11 ՏԱՐԵԿԱՆ (ՄԻԱՑՅԱԼ ԺԱՄ)<br>*2012թ. Միացյալ ժամի ծրագիր. Ընտրիր ճիշտը* (08710) |
| | 3 ՏԱՐԵԿԱՆ (ԱՐԵՎԱՇՈՂ ԴԱՍԱՐԱՆ)<br>*Երեխաների Խումբ 1. Զավակն եմ Աստծո* (34969) |
| | 4–7 ՏԱՐԵԿԱՆ (ԸՃ 4, 5, 6, ԵՎ 7 ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)<br>*Երեխաների Խումբ 2. Ընտրիր ճիշտը Ա* (34484) |
| | 8–11 ՏԱՐԵԿԱՆ (ՔԱՋԱՐԻ 8, 9, 10, ԵՎ 11 ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)<br>*Երեխաների Խումբ 4. Մորմոնի Գիրք* (34594) |
| | Բոլոր դասարանների համար այլ նյութերը ընդգրկում են՝ եկեղեցու ամսագրերը, սուրբ գրությունների պատկերազարդ ընթերցարաններ, *Ավետարանի արվեստի գիրքը* (06048 090), *Մանկական Երգարանը* (35395) և Ցուցադրական նյութերի հավաքածու (անհատական փաթեթներ 1–10): |

| Կազմակերպու-թյուն | Դասագրքեր և նյութեր |
|---|---|
| **Կիրակնօրյա Դպրոց**  | 12–13 ՏԱՐԵԿԱՆ<br>*Պատրաստվել վեհացմանը. Ուսուցչի ձեռնարկ* (31384) |
| | 14–18 ՏԱՐԵԿԱՆՆԵՐ<br>*Մորմոնի գրքի ավետարանի վարդապետության ուսուցչի ձեռնարկ* (35683)<br>*Մորմոնի գրքի դասարանի ուսուցման անդամի ուղեցույց* (35684) |
| | ՉԱՓԱՀԱՍՆԵՐ<br>*Մորմոնի գրքի ավետարանի վարդապետության ուսուցչի ձեռնարկ* (35683)<br>*Մորմոնի գրքի դասարանի անդամի ուսումնասիրության ուղեցույց* (35684) |
| | ՉԱՓԱՀԱՍՆԵՐ<br>*Ավետարանի սկզբունքները*, նոր հրատարակություն (06195)։ Այս դասընթացը նախատեսված է հետաքրքրվողների, նոր անդամների, ակտիվությանը վերադարձող անդամների և նրանց համար, ովքեր ավետարանի հիմունքների ուսուցման կարիք ունեն։Ուսուցիչը ընտրում է դասերի հերթականությունը ըստ դասարանի անդամների կարիքների։ |

| Ըստ հայեցողու-թյան դասընթացներ | Դասագրքեր և նյութեր |
|---|---|
| **Ուսուցանել ավետարանը** | *Ուսուցանում՝ չկա ավելի մեծ կոչում* (36123), էջեր 185–239<br>(12 շաբաթ) |
| **Ամուսնություն և ընտանեկան հարաբերություններ** | *Ամուսնական և ընտանեկան հարաբերությունների ուսուցչի ձեռնարկ* (35865)<br>*Ամուսնական և ընտանեկան հարաբերությունների մասնակցի ուսումնական ուղեցույց)* (36357)<br>(16 շաբաթ) |
| **Տաճար և ընտանիքի պատմություն** | *Տաճարային և ընտանիքի պատմության աշխատանքի ուսուցչի ուղեցույց* (35804)<br>*Տաճարային և ընտանիքի պատմության աշխատանքի անդամի ուղեցույց* (36795)<br>(7 շաբաթ) |
| **Նախապատրաստու-թյուն տաճարին** | *Օժտված ի վերուստ. Տաճարի նախապատրաստության սեմինարի ուսուցչի ձեռնարկ* (36854)<br>*Պատրաստվել մտնել Սուրբ Տաճար* (36793)<br>(7 շաբաթ) |

*Այս ցանկի ոչ բոլոր նյութերն են թարգմանվել կամ առկա համացանցում բոլոր լեզուներով, որ օգտագործում են ընդհանուր կիրակնօրյա ուսումնական ծրագրում։ Խնդրում ենք օգտագործել այս նյութերը, երբ դրանք առկա են դառնում։*

# 2012թ. հիմնական կիրակնօրյա ուսումնական ծրագիր

Օգտագործվում է այնտեղ, որտեղ Եկեղեցին նոր է կազմավորվել տարածքում, կամ որտեղ *ընդհանուր կիրակնօրյա ուսումնական ծրագրի* նյութերը դեռևս առկա չեն տվյալ լեզվով: Յոթանասունի Նախագահության կամ Տարածքի Նախագահության հաստատումից հետո, ցցերի նախագահները կարող են որոշել օգտագործել *հիմնական կիրակնօրյա ուսումնական ծրագիրը* ավելի լավ հաստատված տարածքների և լեզուների համար, եթե այն ավելի լավ կծառայի անդամներին, քան *կիրակնօրյա ընդհանուր ուսումնական ծրագիրը:*

*Այս նյութերից շատերը կարելի է տեսնել կամ ներբեռնել lds.org/manuals կայքից:*
*Եթե անհրաժեշտ են տպագրված նյութեր, դրանք կարող են պատվիրվել ձեր տարածքի բաշխման կենտրոնից կամ store.lds.org կայքից:*

| Կազմակերպություն | Դասագրքեր և նյութեր |
|---|---|
| **Մելքիսեդեկյան Քահանայություն և Սփոփող Միություն**<br> | 1-Ն ԿԻՐԱԿԻՆԵՐ<br>Սուրբ գրություններ, Եկեղեցու ամսագրեր, *Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարների ուղեցույց* (31178), *Ընտանիքի ուղեցույց* (31180) և Եկեղեցու հաստատված այլ նյութեր |
| | 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ԿԻՐԱԿԻՆԵՐ<br>*Քահանայության պարտականությունները և օրհնությունները, Մաս Բ* (31112)<br>*Վերջին Օրերի Սրբերի Կինը, Մաս Բ* (31114) |
| | 4-ՐԴ ԿԻՐԱԿԻՆԵՐ<br>Մեր ժամանակի ուսմունքները դասերը ուսուցանվում են գերագույն համաժողովի ելույթներից, որոնք տպագրված են *Ensign* կամ *Լիահոնա* ամսագրերի վերջին համարներում (տես էջ 6, ելույթների ընտրության հրահանգների համար): Եթե տվյալ լեզվով այդ ամսագրերը առկա չեն, կարող են օգտագործվել Առաջին Նախագահության և Այցելող Ուսուցիչների ուղերձները: |
| | 5-ՐԴ ԿԻՐԱԿԻՆԵՐ<br>Թեմաները և Եկեղեցու հաստատված նյութերը որոշվում են ճյուղի նախագահության կողմից: |
| **Ահարոնյան Քահանայություն և Երիտասարդ Կանայք** | 1-ԻՆ, 4-ՐԴ ԵՎ 5-ՐԴ ԿԻՐԱԿԻՆԵՐ<br>*Ահարոնյան Քահանայության Ձեռնարկ 1* (34820) կամ *Երիտասարդ Կանանց Ձեռնարկ 1* (34823):Ուսուցանեք դասերը հերթականությամբ երկու տարիների ընթացքում, ապա կրկնեք: Եթե *Ահարոնյան Քահանայության Ձեռնարկ 1* կամ *Երիտասարդ Կանանց Ձեռնարկ 1* դասագրքերը մատչելի չեն, օգտագործեք *Քահանայության պարտականությունները և օրհնությունները, Մաս Ա* և Վերջին Օրերի Սուրբ Կինը, Մաս Ա *ձեռնարկները՝ 1-ին, 4-րդ և 5-րդ կիրակիներին:* |
| | 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ԿԻՐԱԿԻՆԵՐ<br>*Քահանայության պարտականությունները և օրհնությունները, Մաս Բ* (31112)<br>*Վերջին Օրերի Սուրբ Կինը, Մաս Բ* (31114) |
| | Այլ նյութերը ներառում են՝ Եկեղեցու ամսագրերը, *Կատարել իմ պարտականությունը Աստծո առաջ. Ահարոնյան Քահանայություն կրողների համար* (06746), *Երիտասարդ Կանանց Անձնական Զարգացում* (36035), *Երիտասարդներին զորացնելու համար* (36550) և *Հավատքին հավատարիմ* (36863): |

| Կազմակերպություն | Դասագրքեր և նյութեր |
|---|---|
| **Երեխաների Խումբ**  | 18 ԱՄՍԱԿԱՆ–2 ՏԱՐԵԿԱՆ (ՄԱՆԿԱՄՍՈՒՐԱՅԻՆ ԴԱՍԱՐԱՆ)<br>*Նայեք ձեր փոքրիկներին. մանկամսուրային ձեռնարկ* (37108) |
| | 3–11 ՏԱՐԵԿԱՆ (ՄԻԱՑՅԱԼ ԺԱՄ)<br>*2012թ. Միացյալ ժամի ծրագիրը. Ընտրիր ճիշտը* (08710) |
| | 3 ՏԱՐԵԿԱՆ<br>*Երեխաների Խումբ 1. Զավակն եմ Աստծո* (34969) |
| | 4–7 ՏԱՐԵԿԱՆ<br>*Երեխաների Խումբ 2. Ընտրիր ճիշտը Ա* (34484) |
| | 8–11 ՏԱՐԵԿԱՆ<br>*Երեխաների Խումբ 4. Մորմոնի Գիրքը* (34594) |
| | Բոլոր դասարանների համար այլ նյութերը ընդգրկում են Եկեղեցու ամսագրերը, սուրբ գրությունների պատկերազարդ ընթերցարանները, *Ավետարանի արվեստի գիրքը* (06048 090), *Մանկական Երգարանը* (35395) և Ցուցադրական նյութերի նմուշները (անհատական փաթեթներ 1–10): |
| **Կիրակնօրյա Դպրոց**  | 12–18 ՏԱՐԵԿԱՆ<br>*Մորմոնի Գրքի ավետարանի վարդապետության ուսուցչի ձեռնարկ* (35683) |
| | ՉԱՓԱՀԱՍՆԵՐ<br>*Մորմոնի Գրքի ավետարանի վարդապետության ուսուցչի ձեռնարկ* (35683) |
| | ՉԱՓԱՀԱՍՆԵՐ<br>*Ավետարանի սկզբունքները,* նոր հրատարակություն (06195): Եթե այս գիրքը առկա չէ, կարող եք օգտագործել *Ավետարանի սկզբունքները* գրքի նախորդ հրատարակությունը (31110): Եթե այս գրքերից ոչ մեկը առկա չէ, կարող եք օգտագործել *Ավետարանի հիմունքները* (31129): Այս դասընթացը նախատեսված է հետաքրքրվողների, նոր անդամների, ակտիվությանը վերադարձող անդամների և նրանց համար, ովքեր ավետարանի հիմունքների ուսուցման կարիք ունեն: Ուսուցիչը ընտրում է դասերի հերթականությունը ըստ դասարանի անդամների կարիքների: |

| Ըստ հայեցողության դասընթացներ | Դասագրքեր և նյութեր |
|---|---|
| **Ուսուցանել ավետարանը** | *Ուսուցանում՝ չկա ավելի մեծ կոչում* (36123), էջեր 185–239 (12 շաբաթ): Եթե այս գիրքը առկա չէ, օգտագործեք *Ուսուցանման Ուղեցույց* (34595), էջեր 21–22 (8 շաբաթ): |
| **Ամուսնություն և ընտանեկան հարաբերություններ** | *Ամուսնական և ընտանեկան հարաբերությունների ուսուցչի ձեռնարկ* (35865)<br>*Ամուսնական և ընտանեկան հարաբերությունների մասնակցի ուսումնական ուղեցույց* (36357) (16 շաբաթ) |

*Այս ցանկի ոչ բոլոր նյութերն են թարգմանվել կամ առկա համացանցում բոլոր լեզուներով, որ օգտագործում են հիմնական կիրակնօրյա ուսումնական ծրագիրը: Խնդրում ենք օգտագործել նյութերը, երբ դրանք առկա են դառնում:*

# Կիրակնօրյա քվորումներ *և* դասարաններ

Ուսումնական տարին ողջ աշխարհում սկսվում է հունվարի 1-ին: Օգտվեք հետևյալ հրահանգներից քահանայության քվորումները և կիրակնօրյա դասարանները կազմակերպելու համար:

## *Մելքիսեդեկյան Քահանայություն և Սփոփող Միություն*

(Տես *Ձեռնարկ 2. Սպասավորել Եկեղեցում* (2010), 7.8.1, 9.4.1.)

Կիրակի օրերի մեծ մասը Մելքիսեդեկյան Քահանայության եղբայրները և Սփոփող Միության քույրերը առանձին են հավաքվում, սակայն ուսումնասիրում են նույն թեմաները և օգտվում նույն նյութերից:

ԱՌԱՋԻՆ ԿԻՐԱԿԻ: Երեցների քվորումի, քահանայապետերի խմբի և Սփոփող Միության ղեկավարները պլանավորում են այս ժողովը իրենց համապատասխան կազմակերպությունների համար և կարող են օգտվել առաջին կիրակի օրվա նյութերից, որոնք նշված են էջեր 2 և 4-ում:

Երեցների քվորումի նախագահության կամ քահանայապետերի խմբի ղեկավարության անդամը ուսուցանում է առաջին կիրակի օրը: Մելքիսեդեկյան քահանայության ղեկավարներն օգտագործում են այս ժողովը ավետարանի վարդապետություններն ուսուցանելու և իրենց քահանայության պարտականություններում ակտիվորեն ընդգրկվելու համար: Քվորումի և խմբի ղեկավարները փնտրում են Հոգու առաջնորդությունը, երբ որոշում են ուսուցանվելիք թեման: Թեմաները կարող են ներառել տնային ուսուցում, քահանայության ծեսերի և օրհնությունների կատարում, ամուսնությունների և ընտանիքների ամրացում, ծառայություն, միսիոներական աշխատանք, նորադարձներին պահում, ակտիվացում, հոգևոր և ֆիզիկական բարեկեցություն, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանք: Քվորումի և խմբի ղեկավարները կարող են օգտագործել այդ ժամանակը՝ մյուսներին օգնելու եղանակներ պլանավորելու համար, հանձնարարություններ տալու և նախկին հանձնարարությունների մասին զեկույցները հավաքելու համար:

Ծխի Սփոփող Միության նախագահության անդամը ուսուցանում է առաջին կիրակի օրը: Սփոփող Միության ղեկավարները այդ ժողովին ուսուցանում են ավետարանի վարդապետությունը և օգնում են քույրերին ակտիվորեն ընդգրկվել Սփոփող Միության աշխատանքի մեջ: Սփոփող Միության նախագահության անդամները փնտրում են Հոգու առաջնորդությունը, մինչ որոշում են ուսուցանվող թեմաները: Թեմաները կարող են ներառել կանանց դերերն ու պարտականություններն ավետարանում, ամուսնությունների և ընտանիքների ամրացում, այցելող ուսուցիչների ուսուցում, ծառայություն, միսիոներական աշխատանք, նորադարձի պահում, ակտիվացում, հոգևոր և ֆիզիկական բարեկեցություն, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանք, Սփոփող Միության պատմություն և նպատակներ: Կարող է ժամանակ տրամադրվել քույրերին վկայություններով կիսվելու համար:

ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻՆԵՐ: Մելքիսեդեկյան քահանայության եղբայրներն ու Սփոփող Միության քույրերը ուսուցանվում են *Եկեղեցու Նախագահների ուսմունքները՝ Ջորջ Ալբերտ Սմիթ* գրքից: Դասերը կարող են ուսուցանվել ղեկավարների կամ քվորումի, խմբի կամ Սփոփող Միության ուսուցիչների կողմից: Դասերը, հիմնականում, մատուցվում են այն հերթականությամբ, որով ներկայացված են ձեռնարկում:

Երեցների քվորումի, քահանայապետերի խմբի և Սփոփող Միության ղեկավարները պետք է հետևեն, որ 18 տարեկան և բարձր բոլոր անդամները ստանան *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջորջ Ալբերտ Սմիթ* գրքի օրինակը՝ իրենց անձնական ուսումնասիրության համար, անկախ նրանից, նրանք կարող են հաճախել իրենց ժողովներին, թե ոչ: Ղեկավարները խրախուսում են նրանց, ովքեր հաճախում են, բերել գրքի իրենց օրինակները և, եթե հնարավոր է, սուրբ գրությունների անձնական օրինակները:

Եթե համաժողովների կամ այլ ժողովների պատճառով, այս դասերից որևէ մեկը չի ուսուցանվում, ցցերի նախագահները և եպիսկոպոսները որոշում են, թե արդյոք այն պետք է ուսուցանվի հաջորդ կիրակի:

ՉՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ—ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ: Դասերը ուսուցանվում են գերագույն համաժողովների ելույթներից, որոնք տպագրված են *Ensign* կամ *Լիահոնա* ամսագրի վերջին համարներում: Այդ ելույթները նաև կարելի է գտնել համացանցում (տարբեր լեզուներով)՝ conference.lds.org կայքում: Դասերը կարող են ուսուցանվել ղեկավարների կամ քվորումի, խմբի կամ Սփոփող Միության ուսուցիչների կողմից: Ցցի նախագահը կամ եպիսկոպոսը ընտրում են ելույթները: Ամսագրերի համաժողովների համարները պարունակում են լրացուցիչ հրահանգներ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ (ԵԹԵ ԱՌԿԱ Է): Եպիսկոպոսը որոշում է ուսուցանվող թեման, ուսուցիչը (սովորաբար ծխի կամ ցցի անդամ), Սփոփող Միության քույրերը և Մելքիսեդեկյան Քահանայության կրողները հավաքվում են առանձին կամ միասին:

## *Ահարոնյան Քահանայություն և Երիտասարդ Կանայք*

(Տես *Ձեռնարկ 2,* 8.11, 10.6)

Ահարոնյան Քահանայության քվորումները, սովորաբար, հավաքվում են առանձին՝ կիրակնօրյա քվորումի ժողովներ և ուսուցում անցկացնելու համար: Ինչևէ, նրանք կարող են միանալ, եթե տարածքում Ահարոնյան Քահանայություն կրող միայն մի քանի երիտասարդ տղամարդիկ են ապրում: Նույն հրահանգները վերաբերում են Երիտասարդ Կանանց դասարաններին: Ահարոնյան Քահանայության երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք երբեմն կարող են միասին հավաքվել և եպիսկոպոսի ղեկավարությամբ կիրակնօրյա դասեր անցկացնել:

Ահարոնյան Քահանայության երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք ուսուցանվում են դասագրքերից, որոնք նշված են էջեր 2 և 4-ում: Ղեկավարները կարող են

հրավիրել երիտասարդներին օգնել ուսուցանել դասերի որոշ մասերը։

### Երեխաների Խումբ

(Տես *Ձեռնարկ 2,* 11.4)

Ղեկավարները պետք է խմբավորեն Երեխաների Խմբի դասարանները ըստ երեխաների տարիքի՝ հունվարի 1-ի դրությամբ։ Եթե երեխաների թիվը բավականացնում է, տարիքային յուրաքանչյուր խմբի համար պետք է լինի առանձին դասարան։ Եթե դասասենյակների կամ ուսուցիչների թիվը սահմանափակ է, տարբեր տարիքի երեխաները կարող են հավաքվել մեկ խմբում։

Հնարավորության դեպքում, 18 ամսական երեխաների համար պետք է կազմակերպվի մանկամսուրային խումբ։ Այդ դասարանում երեխաները ընդգրկվում են ծնողների ցանկությամբ։ Հունվարի 1-ի դրությամբ, 2 տարեկան երեխաները շարունակում են մնալ մանկամսուրային խմբում մինչև 2012թ. վերջը։ Հունվարի 1-ի դրությամբ, 3 տարեկան երեխաները հաճախում են Արևաշող դասարան կամ միավորված ամենափոքրերի դասարան։

Երեխաները ուսուցանվում են դասագրքերից, որոնք տրված են աղյուսակներում, էջեր 2 և 5։

Եթե հարմար է, փոքր երեխաները մասնակցում են Երեխաների Խմբի միացյալ ժամին, իսկ ավելի մեծ երեխաները հաճախում են դասերի։ Երեխաների Խմբի կեսից, երկու խմբերը փոխվում են տեղերով։ Եթե երեխաների թիվը քիչ է, երկու խմբերը կարող են միացվել։ Եթե երկու խմբերը հավաքվում են առանձին, տարիքով ավելի մեծ երեխաների միացյալ ժամը պետք է անցկացվի այն ժամանակ, երբ անց են կացվում Ահարոնյան Քահանայության և Երիտասարդ Կանանց դասերը։

Երեխաները, որոնց 12-ը լրանում է տարվա ընթացքում, սկսում են հաճախել իրենց Ահարոնյան Քահանայության քվորումի ժողովին կամ Երիտասարդ Կանանց դասին Երեխաների Խմբի միացյալ ժամի ընթացքում։ Երեխաների Խմբի դասի ժամանակ 12 տարեկանը նոր լրացածները, սովորաբար, շարունակում են հաճախել իրենց Երեխաների Խմբի դասին մինչև հաջորդ հունվար։ Այնուամենայնիվ, եպիսկոպոսն ու ծխի այլ ղեկավարները կարող են միասին խորհրդակցել, որ որոշեն, թե այս 12 տարեկանների համար ավելի օգտակար կլինի արդյոք հաճախել 12 և 13 տարեկանների Կիրակնօրյա Դպրոց։ Այս որոշումն ընդունելիս, ղեկավարները պետք է հաշվի առնեն երեխաների կարիքները և տարվա այն ժամանակները, երբ առանձին երեխաներ կդառնան 12 տարեկան։ Նրանց որոշումը վերաբերվում է բոլոր երեխաներին, ովքեր տարվա ընթացքում դառնում են 12 տարեկան։

### Կիրակնօրյա Դպրոց

(Տես *Ձեռնարկ 2,* 12.4)

Կիրակնօրյա Դպրոցը հունվարի 1-ի դրությամբ 12 տարեկան կամ բարձր տարիքի անդամների համար է։ Երեխաները, որոնց 12-ը լրանում է տարվա ընթացքում, Կիրակնօրյա Դպրոցի ընթացքում կամ մնում են իրենց Երեխաների Խմբի դասարանում կամ սկսում են հաճախել 12 և 13 տարեկանների դասին, ինչպես որ որոշվում է եպիսկոպոսի կողմից՝ ծխի այլ ղեկավարների հետ խորհրդում։

Եթե երիտասարդների թիվը բավականացնում է, առանձին դասարաններ կարող են կազմվել յուրաքանչյուր տարիքային խմբի համար։ Եթե երիտասարդների, կամ դասասենյակների կամ ուսուցիչների թիվը սահմանափակ է, տարբեր տարիքի երիտասարդները կարող են հավաքվել միասին։ Յուրաքանչյուր ծուխ, որ ունի բավականաչափ երիտասարդ չափահաս ամուրիներ, կարող է նրանց համար առանձին դասարան կազմակերպել Կիրակնօրյա Դպրոցի ժամանակ։

Կիրակնօրյա Դպրոցի ծրագրերը և ուսուցանման նյութերը տրված են աղյուսակներում, էջեր 3 և 5։

### Ըստ հայեցողության դասընթացներ

Ըստ հայեցողության դասընթացների համար տես աղյուսակները, էջեր 3 և 5։ Այս դասընթացները անց են կացվում ըստ անհրաժեշտության և եպիսկոպոսության ղեկավարության ներքո։ Դրանք անց են կացվում մասնակիցների համար հարմար ժամերի, ներառյալ ՝Կիրակնօրյա Դպրոցի ժամանակ։

### Հաշմանդամ անդամներ

Ղեկավարները պետք է հետևեն, որպեսզի հաշմանդամ անդամները տեղյակ լինեն Եկեղեցու ուսումնական ծրագրերի նյութերից, որոնք հարմարեցված են իրենց կարիքներին։ Այս նյութերի մասին տեղեկությունների համար դիմեք բաշխման կենտրոն, որը սպասարկում է ձեր տարածքը, կամ այցելեք store.lds.org կայքը։ Օգտակար տեղեկություն կարելի է գտնել նաև www.disabilities .lds.org կայքում։

### Ուսումնասիրության և ուսուցանման բարելավում

(Տես *Ձեռնարկ 2,* 5.5, 12.5)

Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները պատասխանատու են իրենց կազմակերպություններում ուսումնասիրության և ուսուցանման բարելավման համար։ Նրանք օգնում են նոր ուսուցիչներին կողմնորոշվել և մշտապես հրահանգավորում և աջակցում են։ Ծխի Կիրակնօրյա Դպրոցի նախագահության անդամները ծառայում են ծխում որպես ուսումնասիրության և ուսուցանման բարելավման մասնագետներ։ Որպես եպիսկոպոսության կամ քահանայության և օժանդակ կազմակերպությունների կողմից հրավիրվածներ, նրանք խորհուրդ, ուսուցում և աջակցություն են ապահովում։ Նրանք օգնում են ղեկավարներին կողմնորոշել նոր ընտրված ուսուցիչներին և բարելավել ավետարանի ուսումնասիրությունն ու ուսուցանումը իրենց կազմակերպություններում։ Ծխի խորհուրդների անդամները կանոնավոր խորհրդակցում են միմյանց հետ՝ ավետարանի ուսուցանման և ուսումնասիրության գործընթացը կատարելագործելու հարցերի շուրջ։

*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում* (36123) գրքույկը ուսուցչի կատարելագործման համար նախատեսված նյութ է։ Այն տարածքներում, որտեղ այս գիրքը մատչելի չէ, պետք է օգտագործվի *Ուսուցման ուղեցույցը* (34595)։

# Նյութեր տան *համար*

Եպիսկոպոսը և ծխի ղեկավարները պետք է հետևեն, որպեսզի բոլոր անդամները ծանոթանան և կարողանան ձեռք բերել հետևյալ նյութերը, եթե դրանք մատչելի են տվյալ լեզվով.

Սուրբ գրություններ

Եկեղեցու ամսագրեր

*Օրհներգեր* (31243)

*Ընտանիք. Հայտարարություն աշխարհին* (35602)

*Կենդանի Քրիստոս. Առաքյալների վկայությունը* (36299)

*Ընտանիքի ուղեցույց* (31180)

*Ընտանեկան երեկոյի նյութերի գիրք* (31106)

*Ավետարանի արվեստի գիրք* (06048 090)

*Մեր ժառանգությունը. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հակիրճ պատմությունը* (35448)

*Երիտասարդներին զորացնելու համար* (36550)

*Հավատքին Հավատարիմ* (36863)

*Նայեք ձեր փոքրիկներին. մանկամսուրային ձեռնարկ* (37108)

*Սուրբ գրությունների պատմություններ,* տեսասկավառակներ (06598)

*Թող առաքինությունը զարդարի քո մտքերը* [դիմում է պոռնոգրաֆիայի խնդրին] (00460)

*Նախապատրաստեք ամեն անհրաժեշտ բան. Ընտանեկան ֆինանսներ* (04007)

Տես *Նախապատրաստեք ամեն անհրաժեշտ բան. Ընտանիքի տնային պահեստ* (04008)

Վերևում նշված նյութերից շատերը կարելի է գտնել lds.org/manuals կայքում: Տպագրված օրինակներ ձեռք բերելու համար այցելեք store.lds.org կայք կամ կապվեք բաշխման կենտրոնի հետ, որը սպասարկում է ձեր տարածքը:

ARMENIAN

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/10: Թարգմանության հաստատումը. 6/10: *Instructions for Curriculum 2012* -ի թարգմանությունը: Armenian. 09330 201

09330 201